ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ- 139 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» «03» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, մի կողմից, և «**Ա. Խաչատրյանի տուն-թանգարան**» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Գրիգորյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Բաժանորդային համակարգի ծրագիր») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կազմակերպությունը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2022 թվականի երկրորդ կիսամյակի Բաժանորդային համակարգի ծրագրի կազմակերպման ծախսերի փոխհատուցմանը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (Հավելված N 1) և հաշվարկի (Հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինը պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կազմակերպության կողմից Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

2.2. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կազմակերպության կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինիս գործունեությանը,

2.2.2. Կազմակերպության կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

2.2.3. Կազմակերպությունից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կազմակերպությունից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները,

2.3.2. Սույն Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետներում Պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է

Պետական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (Հավելված N 3)՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.3. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.4. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածի համաձայն կնքել գումարի փոխհատուցման պայմանագրեր նշված կազմակերպությունների հետ, բացառությամբ «Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի հետ:

2.4. *Կազմակերպությունն իրավունք ունի՝*

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կազմակերպությանը հատկացնում է 36024,8 հազար (երեսունվեց միլիոն քսանչորս հազար ութ հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 30020,7 հազար դրամ գումարը Կազմակերպությանը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 6004,1 հազար դրամ գումարը՝ Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված **ԱԱՀ-ի** գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կազմակերպության կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին,

5.6. Պետական մարմինը կարող է սույն կետով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկել և հաշվանցել Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2023 թվականի հունիսի 1-ն է:

6.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	«Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն հ/հ 900018001488 ՀՎՀՀ 00008759 հեռ. (010) 589-418
Գլխավոր քարտուղար _____ Հ. Հակոբյան (ստորագրություն) Կ. Տ.	տնօրեն՝ _____ Ա. Գրիգորյան (ստորագրություն) Կ. Տ.

Հավելված N 1
«13» «03» 2023 թ.
N ՄՇԴ-139-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Բաժանորդային համակարգի
(2022 թվականի երկրորդ կիսամյակ)

1	Կազմակերպության անվանում	«Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան, Զարոբյան փողոց 3
3	Ծրագրի անվանում	«Բաժանորդային համակարգի ծրագիր»
3.1	Բովանդակություն	Ապահովել դպրոցականների և ուսուցիչների անվճար այցը մշակութային հաստատություններ
3.2	Նպատակ	Խթանել դպրոցականների և ուսուցիչների այցը թանգարաններ և ստեղծել կապ մշակույթի հետ
3.3	Անցկացման ժամկետ	2022 թ. երկրորդ կիասմյակ
3.4	Անցկացման վայր	ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությանբ գործող թանգարաններ և այլ մշակութային կազմակերպություններ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ապահովել դպրոցականների և թանգարանների կապը
		Թանգարաններ
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ծրագրից օգտվել են 100.069 այցելու, որից 93.521 աշակերտ և 6548 ուսուցիչ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001488
ՀՎՀՀ 00008759
հեռ. (010) 589-418
տնօրեն՝ _____ **Ա. Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
13 03 2023 թ.
N 139 պայմանագրի

Հաշվարկ
բաժանորդային համակարգի 2022 թվականի երկրորդ կիսամյակի ծախսերի փոխհատուցման (թանգարաններ)

N	Կազմակերպության անվանումը	Աշակերտների քանակ	Ուսուցիչների քանակ	Ընդամենը	Հատկացվող գումարը (հազ. դրամ)
1	«Մատենադարան. Մ. Մաշտոցի անվան հնագույն ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ	8483	731	9214	2764.2
2	«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ	772	60	832	249.6
3	«Դիլիջանի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ	829	83	912	273.6
4	«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ	1608	89	1697	509.1
5	«Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ /Ձիթողցյանների տուն/	2477	136	2613	783.9
6	Գյումրու «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թագարան ՀՈԱԿ-ի կազմում գործող «Գյումրու պատմության թանգարան»	652	31	683	204.9
7	Գյումրու «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ	1304	142	1446	433.8
8	Գյումրու «Միհեր Մկրտչյան թանգարան» ՀՈԱԿ	3033	238	3271	981.3
9	Գյումրու «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» ՀՈԱԿ	507	31	538	161.4
10	Գյումրու «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» ՀՈԱԿ	6474	444	6918	2075.4
11	«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ	4505	330	4835	1450.5
12	«Ն. Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	41	9	50	15.0
13	ՀՀ Վայոց Ձորի մարզի «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ	367	33	400	120.0
14	«Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» ՊՈԱԿ	151	16	167	50.1
15	«Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ (Արա Սարգսյանի և Հակոբ Կոջոյանի տուն-թանգարան, Գևորգ Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարան, Միհեր Աբեղյանի թանգարան, Էջմիածնի պատկերասրահ, Հրաչյա Բունիաթյանի անվան Գավառի պատկերասրահ, Եղեգնաձորի պատկերասրահ, Ջերմուկի պատկերասրահ, Ալավերդու պատկերասրահ, Մինաս Ավետիսյանի թանգարան, Մարտունու պատկերասրահ)	4012	336	4348	1304.4
16	«Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ և մասնաճյուղեր (Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան, Ս. Կապուտիկյանի տուն-թանգարան, Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան, Պ. Պռոշյանի տուն-թանգարան, Ա. Բակունցի տուն-թանգարան)	4212	270	4482	1344.6
17	«Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ	1877	132	2009	602.7
18	«Եղիշե Չարենցի տուն-թանգարան» ՊՈԱԿ	3946	266	4212	1263.6
19	«Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	1781	150	1931	579.3
20	«Երվանդ Քոչարի թանգարան» ՊՈԱԿ	304	26	330	99.0
21	«Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ	1999	155	2154	646.2

22	«Ավ. Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	2048	177	2225	667.5
23	«Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)» ՊՈԱԿ	304	17	321	96.3
24	«Հովհաննես Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ	11382	500	11882	3564.6
25	«Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	1068	86	1154	346.2
26	«Օրբելի եղբայրների տուն-թանգարան» ՊՈԱԿ	200	39	239	71.7
27	«Հրազդանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	241	10	251	75.3
28	«Խ. Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	1445	133	1578	473.4
29	«Կոմիտասի թանգարան -ինստիտուտ» ՊՈԱԿ	2521	123	2644	793.2
30	«Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	822	83	905	271.5
31	«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ (Գրատպության թանգարան)	1120	100	1220	366.0
32	Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա (Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան)	1906	84	1990	597.0
33	«Մ. Սարյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	1679	78	1757	527.1
34	«Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	800	79	879	263.7
35	«Ստ. Զորյանի տուն-թանգարան» ՀՈԱԿ	673	39	712	213.6
36	«Պատմամշակութային արգելոց- թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ (ներառյալ մասնաճյուղերը)	1343	103	1446	433.8
37	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան (ներառյալ մասնաճյուղերը)	8930	491	9421	2826.3
38	«Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ	1325	82	1407	422.1
39	«Վանաձորի Կառլոս Աբովյանի անվ. Կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ	463	26	489	146.7
40	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	491	59	550	165.0
41	«Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ	5426	531	5957	1787.1
	Ընդամենը՝	**93521**	**6548**	**100069**	**30020.7**
	ԱԱՀ*				**6004.1**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				**36024.8**

*** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր բարտուղար՝
Հ. Հակոբյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Ա. Խաչատրյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900018001488
ՀՎՀՀ 00008759
հեռ. (010) 589-418
տնօրեն՝ Ա. Գրիգորյան
Կ.Տ.

Հավելված N 3
«13» «03» 2023 թ
N ՄՇԴ-139 -2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«13» «03» 2023 թ
N ՄՇԴ-139-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀԿՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____, _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

_____